ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

6 դեկտեմբերի 2021 թ. N 1320-Ն

ք. Ստեփանակերտ

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄԱՐՏԱԿԵՐՏԻ ՇՐՋԱՆԻ ««ՎԱՂՈՒՀԱՍԻ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ և 13-րդ հոդվածները՝ Արցախի Հանրապետության կառավարությունը ***որոշում է.***

1. Հիմնադրման միջոցով ստեղծել Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի ««Վաղուհասի» մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպություն՝ շաբաթական հնգօրյա և օրական ութժամյա տևողությամբ:

2. Սահմանել, որ Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի ««Վաղուհասի» մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործունեության առարկան և նպատակը նախադպրոցական կրթական բնույթի գործառույթների իրականացումն է:

3. Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի ««Վաղուհասի» մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության կառավարման, ինչպես նաև «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 13-րդ հոդվածի 2-րդ կետի «գ», «դ», «ե», «է» ենթակետերով և 14-րդ հոդվածով նախատեսված լիազորությունները վերապահել Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի վարչակազմին:

4. Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի վարչակազմի ղեկավարին՝ սույն որոշումն ուժի մեջ մտնելուց հետո տասնօրյա ժամկետում՝

հաստատել՝

ա. Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի ««Վաղուհասի» մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության սեփականության իրավունքով հանձնվող և անհատույց օգտագործման իրավունքով ամրացվող գույքի կազմը,

բ. Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի ««Վաղուհասի» մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության կանոնադրությունը՝ հիմք ընդունելով Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարության 2007 թվականի մարտի 27-ի N 131 որոշմամբ հաստատված «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության պետական նախադպրոցական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրությունը, և այն Արցախի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ներկայացնել պետական գրանցման.

2) ձևավորել Արցախի Հանրապետության Մարտակերտի շրջանի ««Վաղուհասի» մանկապարտեզ» պետական ոչ առևտրային կազմակերպության գործադիր մարմինը:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

«Համապատասխան է»

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱԳԱՀ Ա. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

01-183
8 դեկտեմբեր 1